

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԻՒԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

ՆՈՐԱԳԻՒՏ ԱՐՑԱԽԱԿՐՈՒԹԻՒՆ ԵԽ ԵՐԿԵՐ

4. Բաւական շատ են Միսիթարի առունով մեզ հասած գանձերի թիւը. հոգեոր երգերի այդ տեսակը ծագել է սկսում ժ. դարում և ընդարձակ չափերի հասնում յատկապէս ժԴ — ժԴ դարերում. հաղուագիւտ չեն և ժԵ. դարում գրուած զանձեր: Գրիգոր Նարեկացու և Ներսէս Շնորհալու հետ, նաև Յովհաննէս Պառնեցի, Վարդան (պէտք է որոշել, թէ ո՞ր Վարդանն է), Միսիթար Այրիվանեցի, Խաչտուր Կիչառեցի, Յովհաննէս և Կիրակոս Երգնկացիք, Մանուէլ Բջնեցի Ազիրէկենց, Գրիգոր Խըլաթեցի ևն. ձգել են իրենց արժէքաւոր և անարժէք լուսաները մեր հոգեոր գրակաքութեան այդ ճիւղի գանձանակի մէջ, տարաբախտաբար մինչեւ այժմ անուշաղրութեան մատնուած, թէեւ նրանց ուսումնասիրութիւնը կ'օգնէր և մեր միջնադարեան բանաստեղծութեան հասկացողութեան: Նրանք կարենոր դեր են կատարել մեր անցեալում, կապուած լինելով տէրունական և սրբոց տօների և եկեղեցական տրաբոզութեան մատնուածութիւնների հետ. սրանց մէջ աւելի ժողովրդականութիւն են ստացել եւ մինչեւ վերջին ժամանակները գործադրութեան մէջ են եղել, յատկապէս ննջեցեալներին նուիրուած զանձերը:

Այդպիսի զանձերի (և հոգեոր երգերի) ժողովածուների երկու իրարից տարրեր խմբազրութիւններ յայտնի են մեզ, մէկը հին եւ աւելի արժէքաւոր, հաղուագիւտ, միւսը Գրիգոր Խըլաթեցու ձեռքով հաւաքած եւ կաֆաներով ճախացրած, յետազայում յաւելումներով ուրիշների կողմից: Խըլաթեցին է նաև, որ առաջին անգամ ուշք է դարձրել Այրիվանեցու գանձերի վերայ. այդ մասին տեղեկանում ենք նորա մի ստանաւոր յիշատակարանից, պատմական մասով նման իւր «Քիշատակարանք Աղետից» գրութեան հետ<sup>(1)</sup>), դարձեալ

(1) Հրատարակել է նախ «Ազրիւրի» մէջ Արիստակիւս եպս. Սեղրակեան ութունական թուականներին, ապա Գր. Խալաթեան. Արարտ 1897, 178. նաև առանձին սննդակալ:

Լանկթամուրի արշաւանքներիննուիրուած, բայց նաև զրական տեղեկութիւններով Այրիվանեցու զանձերի մասին: Դեռ եւս իւր կենդանութեան ժամանակի, Այրիվանեցին, Զլե թուրին, հաւաքած է եղել ի մի իւր զանձերը, ինչպէս երեւում է այն նկատողութիւնից, որ եղել է Խըլաթեցու տեսած օրինակի մէջ՝ Գեղարդայ վանքում: Հիա, զանձ կայ՝ տէր Միսիթարայ Այրիվանեցին ի գիրքս, և Բ. երգո նորկերտ գրոց և պատկերաց որրոց: Զլեն:

Ժողովածուն վերջացած էր Միսիթարի հետեւալ ոտանաւոր յիշատակարանով.

Ի յախտաժէտ ըստեանց ճշնչեալ Սպիտակ զինիս այս նոր յայտնեալ, Տէր Միսիթարի ի հոգո անկեալ, Պըտուղ պտուղ զայս հաւաքեալ:

Յաստուածաշունչ գրրոց տաեալ եւ ի բանից սըրբոց քաղեալ, Բան զգումարտակ ի մին շարեալ, Ի՛ եկեղեցոյ կուլըն կախեալ: Արդ, զուք որդիք մաւրս այս ընտրեալ, Որք յետ մեր զայք յարկս այս սըրբեալ, Զմեզ յիշնցէք ի յաղաւթել, Գրելով զայս բանքս ի սըրբագրել:

Սորա տակը կարմրագեղով աւելացրած է. «Տէր Միսիթարն ի Զլե. թըւին տացեալ էր զիւր բանսն և Գրիգոր վրդպն. ի. ՊլԶ. թվին հանդիպեցաւ նորա բանիցն: ՊլԶ. » և լութեցու կամ յիտագայ զրչի կողմից, հիմնուելով նորա յիշատակարանի խօսքերի վերայ: Այս նկատողութեան կցուած է Խըլաթեցու յիշատակարանը, որի առաջին տները Միսիթարի զանձերին են վերաբերում և Գեղարդայ վանքին:

Այլ եւ զԴրիգոր մեղաւք լցեալ, Եւ աբեղայ անուամբ կոչեալ, Բայց ի զործոց յոյժ հեռացեալ, Զւով միայն կեղծաւորեալ:

Որ յետ հարիւր ամաց անցեալ Միսիթարայ բանիցս ոգեալ, Ի յԱյրիվանս մեզ պատահեալ, Փափագ սրտիս եղել լըցեալ: Նա եւ բանից չնորհաւք լըցեալ, Մըլսիթարայ զոր ասացեալ, Բան ըղկամացս իմ կատարել, Բան ու վեց ամ յառաջեալ, ԶԱյրի վանուգ անուն լըւեալ,

Ի՞ քնտիր գանձուցըս հանդիպեալ,  
Եւ յայնմ աւրէ յոյժ ցանկացեալ,  
Տեսլեան տեղոյս ևս տառապեալ:  
Հէմ աստ եղեւ բաղձոնս յանկեալ  
Եւ տեսութեան տրժանացեալ,  
Սուրբ գեղարգեան տեսառնացըլսեալ,  
Եւ խաչերոյս աստուածընկեալ,  
Սուրբ խորանացս հիմնացեալ  
Որ եւ երկնից են կիմաթեալ.  
Եւ գամբարանք սուրբ հաւրս լն-  
լարեալ,  
Միսիթարայ չնորհաւք լըցեալ  
Եւ այլ սըրբոց ճըզնազգեցեալ,  
Որք յԵրիփանս են հանուուցեալ.  
Որոց լիցի մեզ մասնակցեալ  
Ողորմուե . արժանաւուրեալ : Ամմէն  
Եւ այս իդաս իմ կատարեալ  
Եւ բաղձանաց իմոց հասեալ,  
Փափագ սրտիս եղեւ լըցեալ  
Եւ յայ. եմ զահացեալ<sup>(1)</sup>:

Մէջ ենք բերում Միսիթարի երկու  
գանձերը, որ համեմատաբար հազուագիւտ  
են ձեռագիրների մէջ, ճաշակ և գաղա-  
փար տալու համար նորա այդ կարգի աշ-  
խատանքների մասին : Նոքա հետաքրքրա-  
կան են նաև արուեստի պատմութեան և  
ազգագրական տեսակէտով . «Պատմկերաց»  
գանձի մէջ յայտնում է, որ պատկերները  
նկարում են գեղերով եկեղեցիների մէջ,  
ակնարկելով որմանկարները «այլ եւ ի տիպ  
տախտակոյ կենդանագրեալ նազըչի», այ-  
սինքն տախտակի վերաց նկարուած պատ-  
կերները : Խսկ և զս . ահութե . նոր զրոց օ  
գանձի մէջ յիշում է եկեղեցու զարդերը,  
որպէս հարսի, որ սրբազն զրքերն են,  
տալով ժողովրդի մէջ զործազրուած զար-  
դերի անունները :

(1) Տարարադդաբար ամբողջ ձեռագիրը մեր ձեռ-  
ք է հասել, այլ վեց թիրթից բաղկացած մի հատա-  
կուոր միայն, որ Խաչիի վարդապեար հանել է Ազու-  
լիսի թօնմա առաքեալի վանքի գանձարանից, եւ  
այժմ զանուում է էջմիածնի մատենադարանում (Հա-  
տակուորը № 178). 1-2ա ցանկն է ծ . զանձերի, 2բ-նը Միսիթար Այրիփանեցու այսակո մէջ բերուած  
երկու զանձերն են : Պատառիկ թուղթ է . բոլորի, Խաչիկ վարդապեար նկատողութեամբ Քրիզոր Խա-  
թեցու ձեռքով, որ ստուզել չենք կարողացել նորա  
զրչութեան հետ համեմատելով:

Ա.

Տեսան Միսիթարայ ասացեալ պատկե-  
րաց<sup>(1)</sup>.

Սին միսիթին հաւը որդի, ալու տիրական  
ձնաւղի,  
Ճոխ ճառագայթ ճշմարտի, փառք եւ  
փայլումն չնորհի :  
Նոյն ահութը . ահնեցի . պատկերս այս  
քո պանծալի  
Եւ չնորհք հողոյդ էակցի սովու ի մեզ  
էասցի :  
Մեղք եւ յանցանք մեր քաւի, ցաւք  
եւ ցընորք փարատի :

Խորհուրդ խորին խոնարհեալ, մարդ մեր-  
ձաւոր մեզ յայտնեալ,  
Զտիպ տեսակիւդ տրամագրեալ եւ Արգա-  
րու պարզեւեալ .  
Նոյն եւ պատկերս այս պատուալ լիցի  
չնորհաւք քո լըցեալ,  
Ածարար . զաւրացեալ, մեզ փրկութի .  
փութացեալ,  
Որք հաւատով մերձեցեալ, խընդիրքն ա-  
մէն կատարեալ .  
Եւ որք յուսով զիմեցեալ, յամէն չարեց  
ազատեալ :  
Նաև որ զնիւթօ ընծոցեալ, սովու լիշի  
նա սըրբեալ :  
Խոկ տիրուհի լուսածին, դուստր Դաւթի  
արքային,  
Որ ըզպատկերդ քոյին աւծեր տիպ տախ-  
տակիս<sup>(2)</sup>,  
Շնորհեա եւ ըդնոյն ահութի . այս պատ-  
կերիս ոլրբային,  
Տուր զաւրութի . ծառային, զիսաչն ի յե-  
րսս զրչմողին :  
Կեցոյ զորդիս աղախնին, որք ի պատկեր  
քո պարձին :

(1) Վերնագիրը եւ առաջին երկու սովոր մեռա-  
զրի մէջ կարմրագեղով: Տնազուխ տառերն են Ա  
Խ Խ Թ Ա Ը : Պատում ենք Չեռազրի տողերը,  
բայց նկատելի է, որ իւրաքանչիւրը նոցանից եր-  
կու տող է ըստ տարաչափութեան եւ յանգերի:

(2) Ակնարկում է տիրամօր պատկերը, ըստ ա-  
ւանդութեան Հայաստան բերուած Բարգուդիմէսս ա-  
ռաքեալի ծեռքով:

Հեր զուրաւիդն ի մարտին, որք յանուն  
քո զինւորին.  
Բարձ եւ ըզցաւս բորստին, լոյս տուր  
աչացը ին (!):

Արդ փառք քեզ տրըգ, ի քոց  
ձեռաց ստեղծուածոց:

Բ.

Թագ թագւորաց հայկական, պըսսակ պիե-  
տաց հոգեկան,  
Քահանայից սըրբարտն եւ իշխանաց վիզ  
վահան.  
Ո՛վ տիբամայր սըրբազան, սրբեա' զժու-  
ղովս հանրական.  
Դու բարեխաւս բաւական բաց ըզզիթոյդ  
գտնձարան.  
Լից զմեր կարիս մարմնական, չնորհնա  
զպարգես հոգեկան.  
Զցաւդ քո կաթին կուսութե. մեզ ան-  
ձրենա մայբական.  
Զբագուէ քո խաչանման տուր զաւրաւի-  
գըն աւզնական:

Նորի տեսուն Միսիթարաց հոգելի եւ  
բանիրուն վարպտի. վս. ահութե. նոր  
զրոց.

Մեծապայծու ցնձութր., ուրախալից  
ինզութր.  
Հարսըն մաքուր սըրբութր., մայր բաղ-  
մորդի կուսութր.,  
Կաթուղիկէ զուարճութր. ընդ փեսային  
միութր.,  
Զարդարելով ճոխութր. զքոյդ առագաստ  
մաքրութր..  
Պարհաւ որդովք մաքրութր., տաւնեա  
զտաւն քո չքեղութր.  
Գայ որ. փեսայն հեղութր. զքեզ պսակէ  
զըթութր..

Ել ընդ առաջ ճոխութր., և ուրախացիր  
ընդ պարգեւոն:

Խընդա խորանդ լուսոյ, խորհըրդարանդ  
Աստուծոյ.

Ընկալ զընծայս խորհըրդո' զգիրս աւրի-  
նոց հաւատոյ.

Այս քեզ չարոց մարգարտոյ եւ գումար-  
տակ քում գըլխոյ.

Ասյն մեհեւոնդ քում անթոյ եւ բազկա-  
լար դաստակոյ,

Աս մատանի քում կընքոյ եւ զինդ զե-  
զոյ ականջոյ.

Աս տարփ զաւտոյ քոյդ միջոյ եւ շաղք  
հերաց քում հիւսոյ,

Ոսկի խնձոր խաղալոյ եւ վարդ ծոցոյդ  
յարակայ:

Խոկ այս կտակ նոր ուխտի ներկեալ ար-  
եամբ Յիսուսի.

Աս դամանիի քում զըլխոյ եւ սարասիսի  
ճակատի.

Զառքաշ խիլայ վէրն յարկի, բեհեզ հա-  
ջաղ պարփակի.

Հանդերց նասիճ հալուզի եւ պարեգաւո  
չու չթարի.

Աս զարդ անձինդ զովելի, բիւրապատիկ  
խիլայի,

Որ աւրըստաւուր<sup>(1)</sup> փոփոխի ըստ խոր-  
հըրեան քում տաւնի,

Պամեալ ժողովը սըրբոց եւ համաւրէն  
արդարոց,  
Որք այն. սստուծոց էք մերձաւոր ան-  
խըտոց.  
Նըկարագրեալք ի դեղոց յեկեղեցիս ար-  
դա(րոց) (!),  
Այլ եւ ի տիպ տախտակաց կենդանագրեալ  
նազալոց.  
Դուք սիրելի էք սըրբոց, քաւիչ մեղաւք  
մեսելոց.  
Լերուք ցըրւիչք մեր ցաւոց, տուողաւ-  
բարք անդամոց,  
Պարարտութի. մեր պըտղոց, խաղաղաւ-  
բարք խոսվելոց:

(1) Փակագծինը մենք աւելացրինք, պակաս էր:

(1) Զ-ը «աւր ստաւուր»:

Երկըրպագեալ խիլատըն, որ զայ առ  
քեզ հեղարար:

Պագ թագուհոյ քեզ եղեալ զգիրս որ հո-  
գովիլ իւր խաւսեալ,  
Պար հարսանեաց յաւրինեալ, աւրիոր-  
դովք բախացեալ.

Մաքուր կուսաւք միացեալ, նահատա-  
կաւք պսակեալ,

Ճկնաւորաւք դու հըրճեալ, հայրապե-  
տաւք ձեմս առեալ.

Մարգարէիւք հընչեցուցեալ, առաքելովք  
քարոզեալ.

Հաց ըզմարմինն իւր բաշխեալ, զինի զա-  
րիւնն իւր հեղեալ.

Աւհեալ, փրկիչն որ խաչեալ, որում եր-  
դեմք միշտ զայս երգու:

Արեամբն իւրով զքեզ զրումէ ևւ մեռու-

նաւն աւծանէ,  
Խոցեալ բազկաւն ընդ զըրիէ ևւ ի կողէն  
զքեզ շինէ,

Որպէս եւա յլկամէ, նոյնպէս ևւ դու Յուէ..  
Խորհուրդս այս մեծ է [եւ խորէ] (¹), զոր

եւ Պաւոս մեզ յայտնէ,  
Հորսն փեսային մարմնէ, ոսկր յոսկերաց  
նորա է,

Զարչարանաց կըցորդ է, փառաց նըմին  
հաղորդ է,

Զոէր փեսային միշտ յիշէ, կանխէ առ  
նա զիշերի:

Քախճան լուսոյ վերնային՝ հարսնարան ի  
սիտին

Արժանաւորք եզիցին, որք զայս կըսակ  
քեզ բերին,

Որք զմեծ ընծայս մատուցին, յարքայու-  
թիւն. մեծարին,

Որք այժմ առ քեզ դեգերին, ի հարսաւ-  
նիս քո հըրճեին.

Եւ որք ի բանս աշխատին, նոյնք ի մե-  
ջաց ազատին:

Տուր քաւութիւ հայցողին, և անմեղութիւ-  
շարազըրին,

Եւ փրկութիւն փոխազրին, փառաւոր-  
հալոյ յաւիտեանս:

ԳԱՐԵՎԻՆ ԱՐՔԵՊ. ՅԱՎԱԼՓԵԱՆՑ  
Շարունակելի

(¹) Փակազդի մէջ առնուածք յետազայ զրիչ  
յաւելում պիտի լինի:

#### ՅՈՒՆՈՒԱՐ

ՍԹՈՒ 1930 թի 12ի «Միմիքար Այրիվանեցի»-ին  
(եւես 395) առ սիւնակի (3) ծանօթութիւնը լրացնել՝  
արագէս. Տաշան Յուցակ՝ եւես 548, թի 217:

#### ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐՑԵՐ (²)

(Հ. Ա. Դազիկեանի ՄԽ ԳԲՀԲ . . .  
ԳԲԾՑԵԲ . . . ին առիւ)

Գրախօսուկան չէ որ կը զրեմ ներհուն  
ու բազմաբզիւն հայկաբանին այդ զրբին  
մասին, որու «ուղղազբական զասերսուն  
միծագոյն մասը խկիսկ տեղին են, և ան-  
հրաժեշտ է որ բոլոր հայերէն զրոզներէն  
սերտուեն ուշի ուշով: Սակայն հոն կան  
մի քանի դիտելի է էտուր ալ որ վիս կը  
ստիպէն այս յօդուածը զրելու, մանաւանդ  
անս'նք՝ որ ՎԱՆԿԱԾՈՒՄ անուն աշխատա-  
սիրութեանս քննած հարցերուն հնատ սերտ  
անչութիւն ունին: (Տես Ներածութիւնը  
Եփրատ, թ. 158 և 159, Բ. առրի, 1929  
Յունուածը):

Էսելիքներս երկու տեսակի կարելի է  
բաժնել, — Ա. Ռւդուլի Կեսեր: Բ. Թուրա-  
սրելիի:

#### Ա. ԱԻԳԱԵԼԻ ԿԵՑԵՐ

1. Գործնկորիւն . — Հ. Ա. Դազիկե-  
անն սխալ կը համարի այս ձեւը, և կ'ուղ-  
զէ՝ գործունէութիւն: Իր առարկն է թէ  
ուսւնցածնսս պարզ ու չէ որ ըթի փոխու-  
ուի»: Բայց լընչ կը հասկնայ «պարզ ու»  
ըսելով, արմատ բառի ու, մասնիկի՞ ու  
թէ՝ կրկնամասնիկի ու: Անշուշա՞ արմատ  
բառի ու ըսել չ'ուզեր. (համեմատէ՝ տուն-  
անական, ջուր-ջրի): Եթէ մասնիկի ու կը  
հասկնայ՝ անհիմն է իր առարկը, զի հայերէ-  
նի մէջ մասնիկի ու երը կրնան զեղչուիլ. օ-  
րինակ՝ ծածուկ՝ ծածկել, թռչուն՝ թռչնազ-  
գի, խոտորուն՝ խոտորնագոյն, շարժուն՝  
շարժնազոյն, հաստատուն՝ հաստատնա-  
գոյն, սարուկ՝ սարկութիւն, կանգուն՝  
կանգնիլ, հասուն՝ հասնիլ (պատւզի, և ոչ  
թէ տեղ մը հասանիլ), սողուն, սողնական,

(²) Տարգելի յօդուածագիրը իր ձեռագրին մէջ բա-  
ռավեցի անձան յ-եր չէ զրած. նաեւ մէկ եւկու-  
սեղ սկզբը սուզ ը-ով ննջուող բայերուն կը-ա ապա-  
րացով զրած էր: Միանի լեզուն միօրինակ պանել կը  
չանան՝ ուշան կարելի է. ուսի յիշեալ ձեւերը փո-  
խացինք՝ եւ մեր ընդունածին դարձուցիմ:

ԽՄԲ,